ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ե 40/11-7387
«26» 12 20 24 թ.

ՀՀ, ք. Երևան, 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (+ 374 10) 44-34-80, (+ 374 60) 37-26-56
Հեռ.՝ (+ 374 10) 44-29-04, (+ 374 60) 37-77-37

«ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի
ՏՆՕՐԵՆ՝ ՎԱՂԻՆԱԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ

ՀՎՀՀ 03804898
Արարատի մարզ, ք. Մասիս 1 փողոց

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայություն) և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 14.12.2023թ.-ին՝ կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9-3» ծածկագրով գնման պայմանագիր (Այսուհետև՝ Պայմանագիր)՝ «ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կարիքների համար ապրանքներ մատակարարելու վերաբերյալ», որի ընդհանուր գումարը կազմել է 4.056.346 ՀՀ դրամ:

Կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9-3» ծածկագրով Պայմանագրի շրջանակներում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից մատակարարվել են ապրանքներ, որոնց գումարը կազմել է 3.648.937 ՀՀ դրամ:

Պայմանագրի կատարման ընթացքում Կատարողի կողմից թույլ են տրվել պայմանագրի պարտադիր պայմանի խախտում, մասնավորապես. ըստ պայմանագրի՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն պարտավորվել է, 2024թ.-ի հուլիս ամսվա ընթացքում, մատակարարել 60 զույգ կնոջ կոշիկ, որի գումարը կազմում է **407409,6 ՀՀ դրամ**, սակայն մինչ օրս մատակարարում չի իրականացրել: «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9-3» ծածկագրով Պայմանագրի մատակարարման ժամանակացույցի համաձայն,

մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Արդյունքում՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների խախտում՝ խախտվել է ապրանքների մատակարարման ժամանակացույցը, ուստի ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7 կետը՝ ՀՀ ԱՆ ՔԿ ծառայությունը **2024թ.-ի դեկտեմբերի 26-ին, միակողմանի մասնակի լուծում է ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի միջև 14.12.2023թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/9-3» ծածկագրով պայմանագիրը՝ 407.409,6 (չորս հարյուր յոթ հազար չորս հարյուր ինը ամբողջ վեց տասնորդական) ՀՀ դրամի չափով,** ինչպես նաև պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառում է ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Տեղեկացնում եմ, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո հինգ բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900001008375 հաշվեհամարին փոխանցել **21.389 ՀՀ դրամ՝** որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 26.12.2024թ. և **2.037 ՀՀ դրամ՝** որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի համաձայն):

Համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջների՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, պետք է ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե Կատարողը չի վճարում պայմանագրի և որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **42.000 (քառասուներկու հազար) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է **63.000 (վաթսուներեք հազար) ՀՀ դրամ**, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև **2025թ.-ի հունվարի 10-ը** ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **42.000 ՀՀ դրամ՝** պայմանագրի կատարման ապահովման և **63.000 ՀՀ դրամ՝** որակավորման ապահովման գումարները, ընդհանուր **105.000 ՀՀ դրամն**, ապա «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարը անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, ինչպես նաև տույժի և տուգանքի վճարված կտրոնների բնօրինակները, մինչև **2025թ.-ի հունվարի 10-ը** ներառյալ, ներկայացնել ՀՀ ԱՆ ՔԿ ծառայության կենտրոնական մարմին:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ՏԻԳՐԱՆ ԻԳԻԹՅԱՆ**